«Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ՄԱԶԾ-ԳԷՖ լայնածավալ ծրագիր

ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2018 թ. ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏ

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նիստերի դահլիճ

19 հունվարի, 2018թ.

11:00-14:30

Մասնակիցներ

Ծրագրի կառավարման խորհրդի անդամներ		
1.	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ *Ծրագրի կառավարման խորհրդի համակարգող*
2.	Վրեժ Գաբրիելյան Փրկարար ծառայության գնդապետ-մայոր	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ *Ծրագրի կառավարման խորհրդի համակարգող*
3.	Դմիտրի Մարիյասին	ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Հայաստանում
4.	Լիլիա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդական
5.	Աշոտ Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
6.	Արման Հովհաննիսյան	Միջազգային կազմակերպությունների վարչության ՄԱԿ-ի բաժնի պետ, ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՄԱԶԾ		
7.	Արմեն Մարտիրոսյան	Կայուն աճի և զարգացման բաժնի ղեկավար
8.	Տաթևիկ Քոլոյան	Կայուն աճի և զարգացման բաժնի քարտուղար
9.	Գայանե Ղարագեբակյան	Ծրագրի համակարգող / ԾՀ
10.	Վարդան Ծերունյան	Ծրագրի տեխնիկական առաջադրանքի ղեկավար
11.	Քրիստինա Տերեշչատովա	Ծրագրի օգնական
12.	Գագիկ Կարապետյան	Ծրագրի տեղական խորհրդատու-ինժեներ
Մասնակիցներ		
13.	Արտակ Խաչատրյան	Թափոնների գույքագրման, դասակարգման և տեխնոլոգիական հետազոտության բաժնի ղեկավար, «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ / ՀՀ բնապահպանության նախարարություն, Բազելի Կոնվենցիայի ազգային համակարգող
14.	Իրինա Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարություն, Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ / Ծրագրի խորհրդատվական կոմիտեի / ԾԽԿ անդամ
15.	Կարապետ Կարապետյան, Փրկարար ծառայության գնդապետ	ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման

		կազմակերպման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ / ԾԽԿ անդամ
16.	Վահան Սիմոնյան, Ոստիկանության փոխգնդապետ	ՀՀ ոստիկանություն զորահավաքային աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության բաժին / ԾԽԿ անդամ (փոխանցող)
17.	Արշակ Սմբատյան	Ազգային անվտանգության ծառայություն
18.	Նունե Բակունց	ՀՀ Առողջապահության նախարարություն, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ / ԾԽԿ անդամ
19.	Լիլիկ Սիմոնյան	«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, Հիգիենայի և էկոլոգիական ռիսկերի բաժնի պետ / ԾԽԿ անդամ
20.	Վոյտեխ Մյուսիլ	Նուբարաշենի գնահատման և նախագծման ծրագրի համակարգող / Dekonta a.s./ Չեխիայի Հանրապետություն
21.	Բորիս Ուրբանեկ	Նուբարաշենի գնահատման և նախագծման ծրագրի փորձագետ / GEOTest a.s. / Չեխիայի Հանրապետություն
22.	Արտակ Տեր-Թորոսյան	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) մասնագետ
23.	Արամ Բայանդուրյան	Թարգմանիչ

Ներկայացված փաստաթղթեր / նյութեր.

- Ծրագրի տարեկան աշխատանքային և կառավարման պլան 2018 և 2017 թթ.-ների համար
- Ծրագրի արդյունքների շրջանակը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
- Վերանայված բյուջե 2017թ
- Նուբարաշենի գերեզմանոցի տեղանքի գնահատման և բնութագրման հաշվետվություն – ամփոփ տարբերակ
- Ծախսերի գնահատում/նախահաշիվ:

Ներածություն/Բացման խոսք

Նիստի բացման խոսքով հանդես եկավ ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ պրն. Դմիտրի Մարիյասինը՝ ներկայացնելով հանդիպման աշխատանքի ձևաչափը: Նշվեց, որ հանդիպման առաջին կեսին Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ) կդիտարկի ծրագրի 2017 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը և 2018 թվականի համար պլանավորված աշխատանքները: Հանդիպման երկրորդ կեսը կընթանա ընդլայնված շրջանակով, կմիանան Ծրագրի խորհրդատվական կոմիտեի (ԾԽԿ) անդամ փորձագետները և Չեխական կապալառու ընկերության ներկայացուցիչները: Պրն. Մարիյասինը նշեց, որ ծրագիրը բարդ է բոլոր տեսակետներից, թե տեխնիկական, թե քաղաքական, հասարակության արձագանքը նույնպես անկանխատեսելի է, և 2018թ. աշխատանքների վերաբերյալ քննարկման ժամանակ անհրաժեշտ կլինի հաշվի առնել առկա բարդությունները, քաղաքական և կոնցեպտուալ տարբեր հարցերի շուրջ հետևողական աշխատանք տանելու անհրաժեշտությունը:

Պրն. Հակոբյանը ողջունեց հանդիպման մասնակիցներին և նշեց, որ 2017 թ. ընթացքում ծրագրի կողմից կատարվել են բավականին մեծ ծավալով աշխատանքներ և ունեցել է զգալի առաջընթաց և արդյունքներ: Նա շեշտեց, որ ծրագրի թիմը լավ է աշխատել, մեկ ամիս առաջ տեղեկացնելով անդամներին նախատեսվող հանդիպման և օրակարգի մասին: Պրն.Հակոբյանը խնդրեց որոշումները կայացնել տեխնիկական և քաղաքական հարցերի հանգամանալի ուսումնասիրելուց հետո, քանի որ խնդիրները շատ են:

Պրն. Գաբրիելյանը ողջունեց նիստի մասնակիցներին, նույնպես նշելով ծարգրի նախորդ տարվա արդյունավետ աշխատանքը և լուրջ ուսումնասիրությունների իրականացումը:

Աշխատանքները տարվել են շատ ուղղություններով, խորհրդի անդամներից շատերը ակտիվ մասնակցել կամ աջակցել են այդ աշխատանքներին: Ծրագիրը շատ սերտ կապված է երկրում առկա այլ խնդիրների հետ, օրինակ, Նաիրիտի հարցի հետ, և հետագա քայլերի վերաբերյալ որոշումներն այդ առումով կարևորագույն նշանակություն ունեն:

Տկն. Գ.Ղարագեբակյանը ներկայացրեց ծրագրի աշխատանքների ընդհանուր շրջանակը և կառուցվածքը՝ Ծրագրի վերաբերյալ հիմնական տվյալներ, հաշվետվություն 2017թ. աշխատանքների և արդյունքների վերաբերյալ, համառոտ՝ Նուբարաշենի գերեզմանոցի և թափոնի վերագնահատման արդյունքները, թափոնների ոչնչացման տեխնոլոգիաների ուսումնասիրությունը, ծրագրի 2018 տարեկան աշխատանքային պլանը: Մասնակիցներին տրամադրվել էր նաև ծրագրի բազմամյա բյուջեն՝ 2017 և 2018 թվականների մասով, ծրագրի առաջընթացի գնահատման շրջանակը՝ ծրագրային փաստաթղթով հաստատված ցուցանիշների և թիրախների ընդրկմամբ:

Ելույթում ներկայացվեց, որ Նուբարաշենի տեղանքի և թափոնի ուսումնասիրության արդյունքում վերագնահատվել են ժամկետանց պեստիցիդների (ԺՊ) մաքրման/ոչնչացման ենթակա ծավալները՝ 1,052 տ կատեգորիայի 1 ԿՕԱ-ներ պարունակող թափոն (նախկինում 900տ փոխարեն); 4,123 տ (ըստ նախկին գնահատման՝ 7,100 տ) 2-րդ կատեգորիայի՝ ԿՕԱ-ներով բարձր աղտոտված թափոն/հող և 8,500՝ նախկինում 12,700 տ 3-րդ կատեգորիայի՝ ԿՕԱ-ներով ցածր աղտոտված հող, ինչպես նաև 40 տ 4-րդ կատոգերիա համարվող շինություններ, բետոնի մնացորդներ: Գնահատված թափոնի նոր քանակները՝ գնահատման մեթոդաբանական մանրամասներով ներկայացվեցին ծրագրի կապալառու Dekonta կազմակերպության մասնագեների կողմից: Հարցեր տրվեցին քանակների գնահատման որոշ անորոշությունների վերաբերյալ: Արդյունքում, նիստը համարեց նոր գնահատված քանակներն ընդունելի, և այսուհետև մաքրման և ոչնչացման ենթակա դիտարկել ներկայացված քանակների թափոնները: Միաժամանակ, ոչնչացման ենթակա թափոնի ընդհանուր քանակի ճշտման հետ կապված, ինչպես նաև ծրագրի Արդյունք 1.3-ի իրականացման առումով քննարկվեց գյուղական համայնքների պահեստներում կուտակված և պահպանվող 150 տ ժամկետանց թունաքիմիկատների հավաքման հարցը՝ ինչը նախատեսված էր իրականացնել FAO կազմակերպության աջակցությամբ: Առաջարկվեց հարցում կատարել՝ ստանալու պաշտոնական պատասխան նախանշված գործողությունների կարգավիճակի վերաբերյալ:

Ներկայացվեց ծրագրի Ելք 1. Արդյունք 1.1 «Համապարփակ ֆիզիկաքիմիական հետազոտական, երկրատեխնիկական և հիդրոերկրաբանական գնահատումների իրականացում Նուբարաշենի ԿՕԱ/ԺՊ գերեզմանոցի տարածքում, աշխատանքների մանրամասն նախագծում և մոդելավորում՝ ներառյալ գործառնական պլանավորումը» ուղղությամբ կատարվող աշխատանքները: Խորհրդի անդամների կողմից անդրադարձ կատարվեց այս հանձնարարականի իրականացման համար նախատեսված տեխնիկական առաջադրանքի (ՏԱ) կառուցվածքին և հարց բարձրացվեց, թե որ խնդիրների փոփոխությունների արդյունքում էր ստացվել նախապես պլանավորված (2014 թվականին) բյուջեն գերազանցող առաջարկներ: Ծրագրի համակարգողը տրամադրեց տեղեկատվություն, որ առաջին մրցութային ՏԱ-ի համեմատ որպես նոր առաջադրանք ավելացվել էր Առաջադրանք 3-ը՝ Կատեգորիա 2 հողի մնուշների պատրաստում տեխնոլոգիական ընկերություններին տրամադրման նպատակով (բարձր աղտոտված հողի մաքրման արդունավետության փորձարկման և ցուցադրման համար), ավելացվել էր Նուբարաշենի տեղանքի համալիր երկաֆիզիկական հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը: Այս երկու խնդիրների ավելացումը և արձագանքը շուկայի փոփոխություններին բերել էր բոլոր առաջարկների գնային բաղադրիչի ավելացմանը, համեմատած նախորդ՝ չկայացած մրցույթի գնառաջարկների: Այնուհետև ներկայացվեց կնքված պայմանագրի ներքո 11 առաջադրանքների իրականացման ընթացքը, կատարված և ակնկալվող աշխատանքները:

Ելույթի հաջորդ բաղադրիչը՝ Արդյունք 1.2 «Վտանգավոր թափոնների կառավարման համար տարածքի կառուցում» շրջանակներում՝ վտանգավոր քիմիական թափոնների (ՎՔԹ) պահեստի վերակառուցման աշխատանքների նախագծում և վերակառուցումն էր: Համառոտ ներկայացվեց վտանգավոր թափոնի ոչնչացման տեխնոլոգիների ուսումնասիրության ուղղությամբ ձեռքբերած տեղեկատվությունը: Մասնավորապես, ներկայացվեց Ռուսաստանում արտադրված թափոնների բարձր ջերմաստիճանային այրման շարժական կայանքի վերաբերյալ ՄԱԶԾ Ռուսաստանի թրաստային ֆոնդի աջակցությամբ Հայաստան ժամանած ռուսական փորձագետի մասնակցությամբ ունեցած քննարկումների մասին, նշելով, որ Ռուսաստանում մշակված/փորձարկված և աջարկվող

տեխնոլոգիան դեռևս լավ մշակված չէ, առկա է միայն մեկ փորձնական նմուշ: Ներկայացվեց նաև Իրանի Հանրապետությունում առկա այրման գործարանի տարբերակը (ավելի վաղ մանրամաս տեղեկատվություն տրամադրվել էր ԾԿԽ անդամներին), որն ունի համապատասխան միջազգային սերտիֆիկացում:

Տկն. Շուշանյանը նշեց, որ չնայած ԳԷՀ-ը չի խրախուսում աշխատանքը Իրանի հետ, սակայն հաշվի առնելով կառավարության աշխարհաքաղաքական կոնյունկտուրան և այն, որ Հայաստանն ունի իր մոտեցումները և առանձնահատկությունները, առաջարկեց չհանել այս տարբերակը օրակարգից, և փորձել շարունակել բանակցել, հաշվի առնելով թե՛ բյուջետային, թե՛ այլ առկա սահմանափակումները, թե՛ Վրաստանի հետ առկա խնդիրները: Այս շրջանակում դիտարկվեց նաև դեպի Իրան տանող հարավային ուղղությամբ Հայաստանի ճանապարհների ոչ բավարար անվտանգ լինելու հանգամանքը, ինչը նույնպես սահմանափակում է թափոնը ոչնչացման նպատակով բեռնատարներով դեպի Իրան տարհանման տարբերակը: Սրա հետ կապված պրն. Մարիյասինը նշեց, որ Վրաստանի ուղղությամբ առկա է երկաթգիծ՝ ավելի անվտանգ երթուղի է, և երկխոսության քայլեր սկսված են: Պրն. Հակոբյանը տեղեկացրեց մասնակիցներին, որ ըստ վրացական կողմի հավաստման իրենց Ազգային ժողովի կողմից գարնանը կընդունվի թափոնների տարանցումը կարգավորող օրենքի նորացված տարբերակը: Սակայն հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների գործընթացները, այդ հարցը կարող է հետաձվել: Նշվեց, որ վրացական կողմը կառավարության փոփոխության պատճառով դեռևս չի արձագանքել ՀՀ ԱԳՆ-ի կողմից 2017 թվականի հոկտեմբերին Վրաստանի Արտգործնախարարությանը խնդրի առնչությամբ ուղարկված գրությանը:

ԾՀ-ը առաջարկեց, որ հաջորդող հանդիպմանը նաև մասնակից լինի ծրագրի ռեգիոնալ տեխնիկական խորհրդատու պրն. Սուրկովը, ով շատ լավ ծանոթ է և ծրագրի նախապատմությանը, և ՄԱԶԾ-ի և ԳԷՀ-ի ընթացակարգերին և կարող է շատ օգտակար ներդրում ունենալ տարբեր հարցերի վերաբերյալ արդյունավետ լուծումների հանգելու: Այս առաջարկը ողջունեց պրն. Հակոբյանը: ԾՀ-ը հարց բարձրացրեց ծրագրի բյուջեի և աշխատանքային պլանի հաստատման համար, արդյո՞ք անհրաժեշտություն կլինի ևս մեկ հանդիպում կազմակերպել: Պրն. Մարիյասինը առաջարկեց, որ պայմանական հաստատվի 2018թ. աշխատանքային պլանը և կից բյուջեն, առնվազն այն բաղադրիչների ուղղությամբ որտեղ չկա մեծ քաղաքականության հետ կապված հարցեր, իսկ առաջիկայում նոր հանդիպում ունենալ և քննարկել հաջորդ մանրամասներ և գալ ընհանուր հայտարարի, որ ծրագիրը կարողանա շարժվել առաջ: Նա նաև առաջարկոց, որ ծրագրի աշխատանքային պլանի մեջ ավելացվեն մանրամասներ, աշխատանքների մեկնարկման ժամկետների վերաբերյալ, որպեսզի հնարավոր լինի տեսնել, որ ամսվա ավարտին ինչ աշխատանքի մեկնարկ կամ ավարտ է ակնկալվում:

Նիստի II մաս

GEOTest-ի (Dekonta-ի հետ կոնսորցիումի անդամ) ներկայացուցիչ Բորիս Ուրբանեկը ներկայացրեց իր զեկույցը Նուբարաշենի ժամկետանց պեստիցիդների գերեզմանոցի գնահատման հիմնական արդյունքների վերաբերյալ՝ մասնավորապես անդրադառնալով գերեզմանոցի տարածքի հետազոտության և ռիսկերի վերագնահատման տվյալներին:

Dekonta-ի ներկայացուցիչ Վոյտեխ Մյուսիլի զեկույցը վերաբերում էր Նուբարաշենի գերեզմանոցի մաքրման երեք հիմնական տարբերակների տեխնոլոգիական լուծումների սցենարներին՝ մասնավորապես անդրադառնալով I, II և III կատեգորիաների թափոնի/հողի հեռացմանն ու վնասազերծմանն առնչվող տեխնիկական, տնտեսական և բնապահպանական խնդիրներին: Ընթացքում նա նաև ներկայացրեց հանրամատչելի անիմացիոն տեսանյութ գերեզմանոցի տեղամասում իրականացվելիք հիմնական փուլային գործողությունների վերաբերյալ:

Պրն. Հակոբյանը առաջարկեց, որ սցենարներն ըստ հողի աղտոտվածության տարբերակների բերվեն մեկ ամբողջական աղյուսակի տեսքի, որպեսզի ակնառու կերպով ներկայացվեն և նպաստեն որոշում կայացնելուն՝ դրական և բացասական կողմերը յուրաքանչյուր տեխնոլոգիական լուծման տարբերակի կողքին, առանձին սյունակում նշելով ապացուցվա՞ծ է թե ոչ համապատասխան փորձով;

համապատասխանում է, արդյո՞ք, ֆինանսական հասանելիությանը թե չի համապատասխանում, տանում է, արդյո՞ք, ԳԷՀ-ի կողմից դրված վերջնարդյունքին:

Պրն. Հակոբյանը առաջարկեց Ծրագրի համակարգողին քննարկել ԾԿԽ-ի և ԾԽԿ-ի կազմի վերանայման հարցը, ինչի հետ կապված առաջարկվեց ԾԿԽ-ում ներգրավել ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ:

Պրն. Հակոբյանը շնորհակալություն հայտնելով Ծրագրի թիմին, ղեկավար խորհրդին և խորհրդատվական կոմիտեին, և մասնավորապես ՄԱԶԾ-ին, խնդրեց՝ քանի որ Ծրագիրը մտնում է գործառնական փուլ ավելի պատասխանատվությամբ գնահատել խնդիրները և լինել շատ հետևողական յուրաքանչյուր փաստաթղթի, սցենարի կամ որոշման նկատմամբ: Առաջարկվեց արագ համաձայնեցնել հաջորդ հանդիպման օր, թերի մնացած հարցերի ներկայացման և քննարկման համար, որպեսզի հնարավոր լինի ըստ էության գնահատել և օբյեկտիվ որոշում կայացնել:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ

1. Պարզել ՀՀ համայնքներում առկա և գնահատված 150 տ ԺՊ-ների հավաքման և ոչնչացման հնարավորության հարցը և դրան հետ կապված ծրագրի Արդյունք 1.3 իրականացման իրատեսական հնարավորությունը:
2. Պայմանական հաստատվի 2018թ. աշխատանքային պլանը և դրանով ներկայացված բյուջեն:
3. Հստակեցնել ԳԷՀ-ին ուղղվող հարցադրումներ/խնդիրներ (ծրագրի երկարաձգումից սկսած) ԳԷՀ-ին ներկայացման նպատակով:
4. Հրավիրել ծրագրի տարածաշրջանային խոհրդատուին մասնակցելու ԾԿԽ հաջորդ նիստին:
5. Dekonta a.s. ընկերության կողմից իրականացված գնահատումների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացնել հակիրճ տեղեկանքի տեսքով:
6. Ներկայացնել Նուբարաշենի ԺՊ գերեզմանոցի մաքրման աշխատանքների նախագծման երկու մրցույթների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
7. ԾԿԽ կազմում ընդգրկել ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ:
8. Հաջորդ աշխատանքային հանդիպմանը հրավիրել ռեգիոնալ տեխնիկական խորհրդատու պրն. Սուրկովին, ով և ծրագրի նախապատմությանը, և ՄԱԶԾ-ի և ԳԷՀ-ի ընթացակարգերին շատ լավ ծանոթ է, և կարող է շատ օգտակար ներդրում ունենալ հանդիպմանը:
9. Կազմակերպել լրացուցիչ ԾԿԽ նիստ հարցերին վերջնական պատասխան տալու համար:

ՈՐՈՇՎԵՑ

Խորհրդի նիստը համարել չավավարտված: Կազմակերպել հաջորդ հանդիպում բաց մնացած հարցերի քննարկման և որոշում կայացնելու նպատակով:

Ստորագրեցին՝

Խաչիկ Հակոբյան

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ,
Ծրագրի կառավարման խորհրդի համանախագահ

Վրեժ Գաբրիելյան

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ,
Ծրագրի կառավարման խորհրդի համանախագա